Երեքշաբթի, 13 Սեպտեմբերի 2022թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի /0.75 դրույք/ թափուր տեղի համար:

Դաստիարակի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի հաստատած դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի.

1. դիմում

2. կրթության մասին փաստաթուղթ

3. անձը հաստատող փաստաթուղթ

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/ առկայության դեպքում/

5. ինքնակենսագրություն

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի

7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / դրանց առկայության դեպքում/

10. որակավորման տարակարգ/ առկայության դեպքում/:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 11.10.2022-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:30-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 12-ին՝ ժամը 10: 00-ին Սարդարապատ գյուղի մանկապարտեզում (հասցե՝ 9-րդ փողոց 5 շենք):

Տեղեկությունների համար զանգահարել 094-76-00-01, 093-47-89-86: